ԿԱՐՃԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արշակ Հարությունի Վարժապետյանի Ը.00.03 - << Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>> Մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված << Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)>> թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Դրամավարկային քաղաքականության դերը և նշանակությունը գնալով ավելի է կարևորվում գնաճի զսպման, արտարժութային քաղաքականության և կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման առումով:

Տնտեսական կենսունակության և կայուն տնտեսական աճի ապահովման նպատակով երկրում վարվող տնտեսական քաղաքականությանը մասնակցում են միաժամանակ և կառավարությունը և կենտրոնական բանկը: Ընդ որում, եթե կենտրոնական բանկը պատասխանատու է դրամավարկային, արժութային և մակրոպրուդենցիալ քաղաքականությունների, ապա կառավարությունը՝ տնտեսության բոլոր ոլորտներում տարվող քաղաքականության և հարկաբյուջետային քաղաքականության համար:

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրներին, վերջինիս փոխառնչություններին հարկաբյուջետային և մակրոպրուդենցիալ քաղաքականություններին, ինչպես նաև տոկոսադրույքների ազդեցությանը բանկային համակարգի վրա: Ներկայացվել են նաև գների և ֆինանսական կայունության ապահովման հիմնական ուղիները:

Դրամավարկային քաղաքականության արդիականությունը հատկապես կարևորվում է 2020թ. 44-օրյա պատերազմի և ռուս-ուկրաինական հակամարտության ֆինանսա-տնտեսական հետևանքների կարգավորման համատեքստում:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտն է ՀՀ դրամավարկային և հարկաբյուջետային հարաբերությունները, իսկ առարկան՝ այդ քաղաքականությունների փոխառնչությունները:

Ատենախոսության նպատակը եվ խնդիրները

Ատենախոսության նպատակը դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումն է ՀՀ տնտեսության վրա: Այդ նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. ուսումնասիրվել են դրամավարկային քաղաքականության և իրական հատվածի փոխառնչությունները,

2. ուսումնասիրվել և գնահատվել է դրամավարկային քաղաքականության ազդեցությունը հարկաբյուջետային և մակրոպռուդենցիալ քաղաքականությունների վրա,

3. գնահատվել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների ազդեցությունը բանկային համակարգի վրա,

4. գնահատվել է ՀՀ կենտրոնական բանկի միջամտության ազդեցությունը գների կայունության վրա,

5. ուսումնասիրվել և գնահատվել են ՀՀ-ում փողի զանգվածի վրա ազդող գործոնները, ինչպես նաև կանխիկ և անկանխիկ գործառնությունների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա,

6. գնահատվել է ինովացիոն գործիքակազմի ներդրման ազդեցությունը փողի զանգվածի վրա,

7. գնահատվել է հրապարակային առաջարկվող արժեթղթերի հավանական մանիպուլյացիաների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա,

8. ուսումնասիրվել և գնահատվել է հարկերով բեռնվածության և կախվածության մակարդակը և դրա ազդեցությունը դրամավարկային քաղաքականության և գործազրկության մակարդակի կրճատման վրա:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին՝ **<<Դրամավարկային քաղաքականություն հասկացությունը, իրականացման ձևերը և կապն իրական հատվածի հետ>>** գլխում ուսումնասիրվել են դրամավարկային քաղաքականության հասկացությունը, դրա իրականացման ժամանակակից փորձը և կապը իրական հատվածի հետ: Առաջադրվում է այն թեզը, որ դրամավարկային քաղաքականության գործիքակազմը, դրա ռացիոնալ և թափանցիկ կիրառումը մեծ ազդեցություն է ունենում երկրի տնտեսության վրա: Մասնավորապես, անկանխիկ փողերով վճարումների և փոխանցումների իրականացումը նպաստում է դրամավարկային քաղաքականության արդյունավետությանը, տնտեսական զարգացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը:

Դրամավարկային քաղաքականությունը իրական հատվածի վրա ազդում է անուղղակի կերպով,իսկ հարկաբյուջետայինը՝ ուղղակի: Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականությունը անուղղակի կերպով ազդում է ոչ միայն իրական հատվածի վրա, այլ նաև հանրային, ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածի և տնային տնտեսությունների վրա:

Ատենախոսության երկրորդ **<< Դրամավարկային և բյուջետային քաղաքականությունների փոխառնչություններն ու առանձնահատկությունները ՀՀ-ում>>** գլխում ներկայացվել են գների և ֆինանսական կայունության ապահովումը, որոնք ՀՀ ԿԲ վերապահված անկախ գործառույթներն են:

Գնահատելու համար դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների ազդեցությունը տնտեսական համակարգի վրա դիտարկվել են մի քանի փոփոխություններ և միջամտություններ ՀՀ ԿԲ-ի կողմից որոնք ըստ ատենախոսի ունեցել են էական ազդեցություն տնտեսության վրա: Մասնավորապես՝

1. Դիտարկվել է տնտեսության մեջ ֆիսկալ, դրամավարկային և արժութային քաղաքականությունների մասնաբաժինները ՀՆԱ-ում և արտահայտել այն բանաձևի տեսով,

2. Դիտարկվել է դրամավարկային քաղաքականության գործիքների փոփոխությունների դինամիկան, ազդեցությունը և հնարավոր հետևանքները,

3. Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Բանկային համակարգի կենսունակությունն ու ֆինանսական վիճակը գնահատելու նպատակով ուսումնասիրվել է բանկերի կապիտալի կառուցվածքը:

Դիտարկվել է նաև կանխիկ և անկանխիկ փողերի կիրառման ազդեցությունը ՀՀ դրամավարկային քաղաքականության վրա, որոնք էականորեն են անդրադառնում դրամական զանգվածի վերահսկման և կառավարման վրա, ուղղակիորեն ազդելով դրամական զանգվածի շրջապտույտի արագության վրա:

Ատենախոսության երրորդ՝ **<<Գների կայունության ապահովումը և փողի զանգվածի կառավարման կատարելագործումը>>** գլխում ուսումնասիրվել է հարկային բեռնվածության մակարդակը, հարկերից բյուջեի կախվածությունը, իսկ մակրոպրուդենցիալ քաղաքականության մասով՝ Բազելյան կոմիտեյի կողմից սահմանված չափորոշիչներով ֆինանսական շոկերին դիմակայելու ունակությունը:

Փողի զանգվածի վրա մեծ ազդեցություն ունի կազմակերպությունների կողմից հրապարակային առաջարկի տեսքով կանոնադրական կապիտալի համալրումը, որի արդյունքում կազմակերպությունում ստեղծվում է հավելյալ իրացվելիություն: Սա նշանակում է, որ ֆինանսական կազմակերպությունների կողմից բաժնետոմսերի հրապարակային առաաջարկով առավել արդյունավետ է թե իրացվելության և թե անտոկոս փողի տեսակետից:

Գնաճի կարգավորումից բացի ՀՀ ֆինանսական և տնտեսական անվտանգության համար կարևոր է նաև ֆինանսական կայունությունը, որի նպատակով ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է մակրոպրուդենցիալ քաղաքականություն: Այս քաղաքականության նպատակը ֆինանսական հատվածի համակարգային ռիսկերի բացահայտումն է, դրանց զսպումն ու չեզոքացումը, որը նպաստում է երկրի ֆինանսական կայունությանը:

Այսպիսով, հեղինակի կարծիքով ֆինանսական կայունության բարձր մակարդակի հասնելու համար կարևոր է ոչ միայն դրամավարկային, մակրոպրուդենցիալ, արտարժութային և հարկաբյուջետային քաղաքականությունների առանձին-առանձին արդյունավետ իրագործումը, այլև դրանց նպատակային համակարգումը:

<<Եզրակացություններ և առաջարկություններ >> բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության գիտական արդյունքներն ու նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

1. ՀՀ տնտեսական քաղաքականության վերլուծությունների հիման վրա առաջարկվել է նոր բանաձև, որը հնարավորություն է տալիս գնահատել ՀՀ ԿԲ և կառավարության ազդեցության մասնաբաժինները տնտեսության վրա:

2. Առաջարկվել է << քնող>> փողի եզրույթը, որի էությունը կայանում է նրանում, որ տնտեսության մեջ առկա փողի զանգվածը տարեցտարի ավելի քիչ շրջապտույտ կատարելով ցույց է տալիս երկրի ներսում բնակչության հակվածությունը ավելի շատ խնայողությունների նկատմամբ:

3.Ֆինանսական կայունությունը դիտարկվել է մակրոպրուդենցիալ քաղաքականության համատեքստում ֆինանսական ոլորտում կապիտալի հակացիկլիկ բուֆերի կիրառմամբ:

4. Առաջարկվում է հայաստանյան վճարամիջոցներ հանդիսացող տեղական վճարային քարտերն ու գործիքները կամ դրամապանակները տանել թոքենացման միջոցով միջազգայնացման, մասնավորապես ARCA համակարգը,որը կդիվերսիֆիկացնի վճարումները և կբերի համապատասխան ծախսերի խնայողության:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Որպես գիտական նորույթ առաջարկված բանաձևը մի փոքր վիճահարույց է, քանի որ դրա համաձայն տնտեսական քաղաքականությունը հավասար է դրամավարկային, հարկաբյուջետային և արժութային քաղաքականությունների միագումարին, այսինքն տնտեսական քաղաքականությունը նույնականացվում է ֆինանսական քաղաքականության հետ: Ցանկացած քաղաքականություն դա ծրագրերի, ենթածրագրերի և քաղաքականության միջոցառումների մի ամբողջություն է, որն իրագործվում է որոշակի ժամանակահատվածում և տարբերվում է ըստ ոլորտների: Եվ չնայած դրան, որ տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունները կարող են փոխկապակցված լինել, դժվար է պատկերացնել դրանց մեխանիկական գումարը, ինչպես ներկայացված է ատենախոսության երկրորդ գլխի բանաձևում, մանավանդ երբ այդ գումարը կարող է վերաճել մեկ այլ քաղաքականության:

Եթե նկատի ունենանք բանաձևում արտացոլված տնտեսական ցուցանիշները ապա ստացվում է, որ ՀՆԱ -ն (տնտեսական քաղաքականություն) հավասար է մոնետար մասնաբաժնին , որն օրինակ 2022թ. համար գերազանցում է դրամական զանգվածին (հաշվի չառած դրամի պտույտների թիվը) , գումարած պետական բյուջեի եկամուտները և գումարած արտարժութային մասնաբաժինը, որը ՀՆԱ-ի և մոնետար և ֆիսկալ մասնաբաժինների միագումարի մեխանիկական տարբերությունն է: Չի բացատրվում, թե ինչ բան է արժութային մասնաբաժինը, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես կախյալ փոփոխական: Այսինքն, ըստ ներկայացված բանաձևի երկրի ՀՆԱ-ն բաղկացած է միայն մոնետար, ֆիսկալ և արժութային մասնաբաժիններից, որը չի համապատասխանում իրականությանը:Մասնավորապես,ՀՆԱ-ի մաս են կազմում մասնավոր կապիտալ ներդրումները (սեփական միջոցների հաշվին) և օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնք ներկայացված բանաձևում ընդգրկված չեն:

2. Աշխատանքում (եզրակացություն 5) եզրահանգվում է, որ դրամի արժևորումը հանգեցրել է գնաճին, որը մեր կարծիքով ճիշտ հակառակ ազդեցություն է ունեցել, նպաստելով գնաճի զսպմանը:

3. Մենք համաձայն չենք այն պնդմանը (եզրակացություն 11), որ բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ կիրառվում են մանիպուլյացիոն սցենարներ, որի արդյունքում չի ձևավորվում իրական շահույթ և չեն վճարվում համապատասխան հարկերը: Հակառակը, բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ աճում է ձեռնարկության կապիտալը, ստեղծելով նոր հնարավորություններ լրացուցիչ շահույթի ստացման և հետևաբար նաև լրացուցիչ հարկերի վճարման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արշակ Հարությունի Վարժապետյանի <<Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)>> ատենախոսությունը

կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որի արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները քննարկված են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում և հրապարակված են վեց գիտական հոդվածներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով **Արշակ Հարությունի Վարժապետյանի <<Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)>>** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է << ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 - **<< Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>>** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լ.Վ. Բարխուդարյան

13 նոյեմբերի , 2023թ.

Լ.Վ.Բարխուդարյանի ստորագրության

իսկությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն.Հ. Դարբինյան